



ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԱԶՔԵՐՈՎ

Բանաստեղծի աչքերով
Դեռ կը նայիմ ես կեանքին,
Մեծախորհուրդ բայց մեղին,
Դէն շարժել փորձելով
Օրերու բեռն ահագին,
Անոնց կեղտէն, փոշիէն
Ա՛լ մաքրելու իմ հոգին
Ու նայելու երկնքին:

Բանաստեղծի աչքերով
Ու հաւատով աննկուն
Դեռ կը նայիմ օրերուն
Հմայաթափ ու անգոյն.
Կեցած դէմը բիւր կեանքին,
Նոյն նծարով կը կռւեմ
Անոր աւազն ու ոսկին,
Անոր ամառն ու ձմեռ,
Անոր ցերեկն ու գիշեր:

Բանաստեղծի աչքերով
Դեռ կը դիտեմ կեանքը սին,
Կ'ուզեմ սփռել սէր, գորով,
Հասնիլ օր մը անհասին,
Ցանել սերմեր ծոցն հողին
Բայց չսպասել պտուղին:

1987

Բանաստեղծի աչքերով
Կ'ուզեմ գգուել ես աստղեր,
Մանր սէրերէն ըլլալ վեր,
Ու ամէն խիստ, բարութիւն,
Դիզուած մեր մօտ կամ հեռուն
(Ի՞նչ փոյթ փայլես եմ նկուն)
Բերել, բաշխել մարդերուն:
Օրերուն դէմ ահալի,
Մարդերն տեսնել աւելի
Բարի կ'ուզեմ ես այսօր,
Գոյներն՝ պայծառ աւելի,
Երգերն՝ հզօր աւելի,
Սէրերն՝ ամուր աւելի,
Ու բարիով ծոցուորած
Հասկերն՝ աստ ավելի.
Մանկան մը քաշմ ժպիտով,
Սիրողի տաք համբոյրով,
Ուրբի մը խունկ աղօթքով
Վերածելու երկիրն մեր
Վեհ, սրբազն ճանապարհ,
Ուր ամէն մարդ ու խորհուրդ
Գերազնիւ է ու բարի:

Բանաստեղծի աչքերով
Կ'ուզեմ նայիլ ես կեանքին,
Հողագունդն ալս ընելու
Նախագաւիթն երկնքին:

Գ. ՃԱՐՏԱՐ

